ԷՋԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏՈՒԴԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՆԱԻՐԱ ՄԱԴՈՅԱՆ

1921թ. դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ Երևանի երաժշտական ստուդիայի հանդիսավոր բացումը, որի ղեկավար էր նշանակվել ՀԽՍՀ լուսժողկոմ Ալեքսանդր Մյասնիկյանի հրավերով նույն թվականի մայիսի 20-ին Թբիլիսիից Երևան տեղափոխված Ռոմանոս Մելիքյանը:

Ուսումնասիրելով խնդիրը, ծանոթանալով երաժշտական գործին և նրա բոլոր անհրաժեշտ պահանջներին՝ Ռ.Մելիքյանն առաջարկում է առաջին հերթին հիմնել մի երաժշտական օջախ, մի երաժշտական կենտրոն, որտեղ կձևավորվեն մեր երաժշտության հիմքերը: Կառավարությունն ընդառաջում է այս առաջարկին և տրամադրում բոլոր անհրաժեշտ միջոցները: Սա միայն գործի տեսական կողմն էր, որը նրա կազմակերպողից գործնականում պահանջելու էր մեծ աշխատանք, հմտություն, եռանդ, երաժշտական բազմակողմանի տեղեկություններ և կազմակերպչական շնորհք:

Երաժշտական ստուդիայի բացման հարցը հնարավոր չէր առաջ քաշել դրանից առաջ, երբ ստուդիայի գոյությունն ապահովելու համար չկային համապատասխան մթնոլորտ և պայմաններ:

Այդ շրջանում էր, որ կազմակերպում էին փոքրիկ խմբակներ և մշակում հայ երաժշտության զարգացման ուղեցույց սկզբունքները: Ստուդիան դառնալու էր այն կայանն ու ակադեմիական կենտրոնը, որտեղ մշակվելու և վերջնական լուծում էին ստանալու տարիների ընթացքում կուտակված խնդիրները: Այստեղ կիրառվելու էին մեր երաժշտական առանձնահատկությունները, և լուսաբանվելու էր հայկական երաժշտական ոճը: Երաժշտական ստուդիան ավարտելու էր նախկին շրջանների թերի գործերը և տալու էր հայ երաժշտության հետագա առաջընթացի հնարավորություն: Տնտեսական դժվարին պայմաններում գտնվող երկրի կառավարության և երաժշտական ստուդիայի ղեկավարի այս կարևոր գործը մի նոր գրավական է հայ ժողովրդի կենսունակության և հոգևոր բարձր կարողությունների:

Ստուդիայի հանդիսավոր բացման ժամանակ ելույթ ունեցան Պողոս Մակինցյանը, Տիգրան Հախումյանը, Ս.Մելիքյանը, Ս.Հովհաննիսյանը, Ա.Իսկանդեր-Ալիխանյանը և Ռոմանոս Մելիքյանը, ով, մասնավորապես, ասաց.

«Друзья!

Впервые открывается в Армении Музыкальная Студия. До сих пор здесь было открыто много школ и училищ различного рода и типа, но рассадник музыкального образования открывается здесь впервые.

Многие, многие годы это было лишь грезой, мечтой, и сегодня мы видим мечту уже воплощенной – мы открываем Музыкальную Студию. Возникает вопрос, почему мы не открываем здесь музыкальное училище или Консерваторию, а именно Студию? И что такое Студия? А вот почему. Еще изстари лучшие мастера искусства, в различных его отраслях, имели при себе мастерские-студии (от глагола studiare - изучать, заниматься), где они всецело отдавались своему искусству, в которые они собирали наиизбраннейших своих учеников и обучали их своему искусству. Здесь же в студиях, происходила работа не только по изучению искусства, а вырабатывались и средства выражения его. Так, например, готовились полотна, мешались краски, составлялись инструменты. Таким образом, мастера, или как их называли "маэстро", являлись одновременно и педагогами, и творцами. Здесь же, в студиях, ковались наилучшие традиции, раскрывались тончайшие тайники искусства, которые как редчайшее наследие, маэстро передавал наиизбраннейшим своим ученикам. Вот вкратце объяснение слова "студия"[1].

Համերգային բաժնում մասնակցեցին Լևոն Միրզա-Ավագյանը (ջութակ), Հովսեփ Մադաթյանը (դաշնամուր), Արուս Բաբայանը (երգ), Աննա Մնացականյանը (դաշնամուր) և Ալեքսանդր Հակոբյանը (նվագակցություն): Հնչեցին Ջ.Հենդելի, Յ.Բախի, Ժ.Լյուլլիի, Դ.Սկարլատիի, Ժ.Ռամոյի, Ք.Գլյուկի, Յ.Հայդնի, Ջ.Պերգոլեզիի, Ֆ.Կրեյսլերի ստեղծագործությունները:

Հիրավի, 1921թ. դեկտեմբերի 22-ը հայ արվեստի տարեգրության կարևոր հանգրվաններից է: Այդ տարեթիվը շատ նշանակալից է հայ երաժշտության պատմության համար: Մինչ այդ Հայաստանում չկար երաժշտական որևէ հաստատություն, անգամ տարրական երաժշտական դպրոց, որևէ երաժշտական միավորում, բացի սազանդարությունից: Այդ ժամանակաշրջանում Երևանում կային 1 կինոթատրոն, մոտ 2 տասնյակ երաժիշտներ, ովքեր նվագում էին ժողովրդական գործիքներ (զուռնա, սազ) և զինվորական գնդի փողային նվագախումբը: Սա էր Երևանի 1918-1920թթ. ողջ մշակութային կյանքը: Երաժշտական ստուդիան էր, որ սկսեց թե՛ երաժշտական ակադեմիական

[1] ԳԱԹ, Ռ.Մելիքյանի ֆոնդ, թիվ 1702:

կրթությունը, և թե՛ երաժշտությունը լայն մասսաների մեջ տարածելու մեծ գործը:

Ստուդիան կարելի է և պե՛տք է համարել մեր այսօրվա երաժշտական հաստատությունների՝ դպրոցների և ուսումնարանների սկիզբը: «Թե որքան է յաջողվելու երաժշտական Ստուդիային յաղթանակով պսակելու իր մեծ գործը, որն էսօր էնքան համեստ ու դիւրին է թվում, էդ ցույց կտա մօտավոր ապագան, բայց մենք ուզում ենք հավատալ, որ նրա առաջ դրված խոշոր խնդիրները էնքան պարզ են ու էնքան անխուսափելի, որ Հայաստանի մայրաքաղաքում բացվող երաժշտական անդրանիկ Ստուդիան հենց առաջին քայլերից ցույց կըտա, որ նրա ճամբէն տանում է նրան դէպի համամարդկային կուլտուրայի հոյակապ շենքը, ուր ստեղծագործողը անհատ չէ, այլ մի՛ կամքով ու մի՛ զգացումով ձուլված մասսաները»[2]:

Առաջին՝ 1921/22 ուսումնական տարում Երաժշտական ստուդիայում գործում էին հետևյալ դասարանները և դասատուները.

դաշնամուր – Հովսեփ Մադաթյան, Աննա Մնացականյան

վոկալ – Արուս Բաբայյան

ջութակ – Լևոն Միրզա-Ավագյան

խմբական երգ, տեսական – Ռոմանոս Մելիքյան

նվագակցում էր Ալեքսանդր Հակոբյանը:

Բավական մեծ էր ստուդիա ընդունվել ցանկացողների թիվը, սակայն հնարավորություններն այնքան մեծ չէին: Նախ, դասատուների թիվը շատ փոքր էր, և հետո երաժշտական ստուդիային հատկացված շենքում կար լսարանների խնդիր (բաղկացած էր դահլիճից և երեք սենյակներից, որոնցից մեկը գրասենյակ էր): Մասնագիտական դաշնամուրի բաժին ընդունվեցին 20 հոգի, որոնցից 5-6 հոգի էր մի փոքր նվագում, մնացածները սկսնակ երեխաներ էին:

«Ստուդիան նպատակ ունի ծաղկեցնել, բյուրեղացնել հայ երաժշտությունը, ազնվացնել նրա գեղարվեստական արժեքները, որոնել և հայտնագործել նրա ինքնուրույն դեմքը, որը պետք է պատվաստվի մեր ժողովրդական երգի և բանահյուսության ուսումնասիրությամբ՝ պատվանդան ունենալով եվրոպական երաժշտական կլասիկ գրականությունը: Ստուդիան հանդիսանում է այն լաբորատորիան, որտեղ կատարվելու են այդ աշխատանքները. ակադեմիկ բաժինը մեզ մատակարարելու է մասնագետ ուժեր, որոնք ձեռնարկելու

[2] **Հախումեան Տ.**, Կուլտուրական տոն, «Խորհրդային Հայաստան», 24.12.1921: Hakhumyan T., Kulturakan ton, «Khorhrdayin Hayastan», 24.12.1921:

են ակադեմիկ աշխատանքները, իսկ հանրակրթական բաժինը պետք է նախապատրաստի մի շարք երաժշտական աշխատավորներ, որոնց մի մասը անմիջապես մտնելու է մեր աշխատավորական դպրոցները՝ կարգի բերելու մեր մանկական-դպրոցական երաժշտությունը, մի մասը ցրվելու է գավառ՝ զարկ տալու շրջանի երաժշտական պահանջներին իրենց կազմակերպած համերգներով և այլ երաժշտական իլլյուստրացիաներով, իսկ մի մասն էլ կազմակերպելու է երաժշտական արշավախմբեր և հավաքելու մեր անհետացող ժողովրդական երգերը, որոնք հում նյութ են ծառայելու իրենց ակադեմիկ ընկերների լաբորատորիական աշխատանքների համար»[3]:

Երաժշտական ստուդիայի բացվելուց հետո հայ երաժշտական մշակույթը թևակոխեց նոր դարաշրջան: Հասարակական և մշակութային զարգացման այդ դժվար պայմաններում նույնիսկ ամենահամեստ գործերը մեծ արժեք են ներկայացնում, քանի որ նրանց մեջ թաքնված էր ապագայի մեծ հեռանկարը: Ստուդիա ընդունվել ցանկացողները ցուցակագրվում են, հետո նշանակվում է ստուգում, որի ժամանակ նկատի են առնվում նրանց երաժշտական լսողությունը, երաժշտական հիշողությունը, ռիթմի զգացողությունը: Ստուգումից պարզ է դառնում, որ միայն 288 հոգի կարող են մասնակցել ընդունելության քննություններին, որից 75 հոգի են ընդունվում ստուդիա՝ բաժանվելով 2 բաժիններում՝ ակադեմիական և հանրակրթական: Հանրակրթական բաժինը Հայաստանի դպրոցներին պետք է տար երաժշտության ուսուցիչներ, խմբավարներ, երգահավաքներ:

Առաջին հերթին պարապմունքները սկսվում են հանրակրթական բաժնում: Դասավանդվում են ռիթմիկ մարմնամարզություն, որը աշակերտների մեջ կզարգացներ ռիթմի զգացողությունը, էսթետիկա, տեսություն և սոլֆեջիո: Այս առարկաներից որոշ գիտելիքներ ստանալուց հետո միայն անցնում էին մասնագիտական առարկաներին:

Այս ամենին զուգընթաց տեղի էին ունենում նաև ունկնդրման դասեր տարբեր ծրագրերով, որոնք նպատակ ունեին զարգացնել աշակերտության ճաշակը և ծանոթացնել երաժշտական տարբեր դպրոցների: Ունկնդրության դասերի գեղարվեստական ծրագրի կատարողները գեղարվեստական խորհրդի անդամներն էին: Մինչ ծրագրի երաժշտական մասը սկսվելը տեղի էր ունենում բանախոսություն տվյալ ծրագրի երաժշտության վերաբերյալ, որի

[3] **Միրզայեան Մ.,** Երաժշտական ստուդիան Երևանում, «Կարմիր Աստղ», 14.04.1922: Mirzayan M., Yerajshtakan studian Yerevanum, «Karmir astgh», 14.04.1922:

ընթացքում բացատրվում էին նյութը, հեղինակների կենսագրությունը և նշանակությունը:

Առաջին ունկնդրությունը տեղի է ունենում 1922թ. փետրվարի 5-ին և նվիրված էր հայ մանկական և պատանեկան երգերին: Առաջին ակադեմիական համերգը բաղկացած էր երկու բաժիններից, որում ընդգրկված էին 24 երգեր: Առաջին բաժնում հնչեցին Մակար Եկմալյանի «Աղոթք», «Ուխայ-ուխայ», Կոմիտասի «Կաքավիկ», Ազատ Մանուկյանի «Պապի տատի», «Բարի լուսի», «Ծաղիկների երգը», Անտոն Մայիլյանի «Տիկնիկ», «Կարմիր վարդիկ», Անուշավան Տեր-Ղևոնդյանի «Ճախարակ», Գ.Գեղարիկի (Տեր-Գաբրիելյանի) «Քեզ եմ գովում», «Օրոր» և Ռոմանոս Մելիքյանի «Եկավ գարուն» երգերը: Համերգի երկրորդ բաժինն ամբողջությամբ նվիրված էր Ռ.Մելիքյանի երգերին, որոնցից էին «Աղվեսը», «Մանուկն ու ջուրը», «Լուսինն ելավ», «Զատիկ», «Օրորոց», «Կլոր պար»: Երգերը կատարել է Արուս Բաբայյանը Ալեքսանդր Հակոբյանի նվագակցությամբ: Երկրորդ ունկնդրությունը տեղի է ունեցել փետրվարի 19-ին, նվիրված էր Յ.Ս.Բախին և նրա ստեղծագործություններին:

Երրորդ ունկնդրությունը տեղի է ունեցել մարտի 12-ին՝ ծրագրում ընդգրկելով Արևմտյան Եվրոպայի 16 ազգերի ժողովրդական երգեր: Համերգի ընթացքում հնչել են ֆրանսիական, ֆլամանդական, իռլանդական, ֆիննական, շվեդական, շոտլանդական, հունգարական, լիտվական, իսպանական, լեհական, գերմանական և այլ երկրների ժողովրդական երգեր Արուս Բաբայանի կատարմամբ: Այնուհետև կազմակերպվել են ունկնդրություններ՝ նվիրված Է.Գրիգին, Ֆ.Շոպենին, Ռ.Շումանին, Վ.Ա.Մոցարտին, Լ.Բեթհովենին և այլն[4]:

Բացի այդ, Երևան այցելող որոշ արտիստներ մեկ կամ երկու ունկնդրություն են նվիրել ստուդիային: Ինչպես օրինակ, Մարիամ Տիգրանյան-Տեր-Մարտիրոսյանը (դաշնամուր), Օգանեզաշվիլին (քամանչա): Ուսումը ստուդիայում շարունակվում էր մինչև մայիսի վերջը, անվճար էր և դասավանդվում էր հայոց լեզվով:

Երկրորդ ուսումնական տարվա համար ցուցակագրվել էր 612 հոգի, որոնցից նախնական ստուգումն անցնելուց հետո միայն 253 հոգու թույլ տվեցին մասնակցել քննություններին, և ընդունվեցին 82-ը: Ուսանողների մեծ տոկոսն արհմիությունների անդամներն էին, կարմիրբանակայինները, մանկատների սաները: Երկրորդ ուսումնական տարում ստուդիան ուներ դաշնա-

[4] ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշներ:

մուրի երեք դասարան, վոկալի երկու դասարան, ջութակի երեք դասարան, թավջութակի մեկ դասարան: Բացի այդ ուսանողներն ուսումնասիրում էին ռիթմիկ վարժություններ, գեղարվեստի պատմություն, սոլֆեջիո և տեսություն, էսթետիկա, բազմաձայն երգեցողություն, մեթոդիկա-դիդակտիկա, մասսայական դեկլամացիա, հայկական նևմաների ուսուցում, ֆոնետիկա և անսամբլ (գործիքների): Ռոստովից հրավիրվել էին նոր ուսուցիչներ՝ Դավիթ Սողոմոնյանը (դիրիժոր, ջութակ) և Ավետիք Գաբրիելյանը (ջութակ): Դասավանդելու համար հրավիրված էր նաև դաշնակահարուհի Թագուհի Զաքյանը: Ստուդիան մեծ գործ կատարեց՝ հայկական նևմաների ուսուցումը որպես պաշտոնական առարկա մտցնելով մյուս պարտադիր առարկաների շարքում: Հայկական նևմաների ուսումնասիրությունը հնարավորություն էր տալիս ստուդիայի ուսանողներին մոտիկից ծանոթանալու հայ հոգևոր և ժողովրդական երգերին:

«Ակադեմիկ աշխատանքից զատ, Ստուդիան ունենալու է նաև երաժշտական գեղարվեստական երեկոներ, որոնք տեղի են ունենալու թատրոնի դահլիճում դրսի հասարակության համար. դրանք լինելու են պատմական համերգներ, ուր կատարվելու են 15-րդ դարից սկսած մինչև մեր ժամանակների հայտնի երաժշտագետների ստեղծագործությունները»[5]:

Անհրաժեշտ է նշել, որ ստուդիայի փակ համերգները մեծ ժողովրդականություն էին վայելում հասարակության մեջ և այն ժամանակ միակն էին Երևանում, որտեղ դեռ համերգային դահլիճ էլ չկար: Մարդիկ մեծ ոգևորությամբ և հաճույքով էին օգտվում փակ համերգներն ունկնդրելու հնարավորությունից:

Շատ ջերմ մթնոլորտ էր ստեղծված երաժշտական ստուդիայի և նրա աշխատակիցների շուրջ: Բոլորը քաջ գիտակցում էին գործի նշանակալիությունն ու կարևորությունը: Ռ.Մելիքյանն աշխատում էր համառությամբ և նվիրվածությամբ՝ օրինակ ծառայելով մյուս դասատուներին, ովքեր աշխատում էին մեծ խանդավառությամբ և ոգևորությամբ: Նույն թվականի հունիսի 18-ին տեղի է ունենում երաժշտական ստուդիայի առաջին աշակերտական համերգը: Երեք բաժիններից բաղկացած համերգին հնչեցին Բախի, Գունոյի, Հայդնի, Հելլերի, Կուլաուի, Ֆոգելի, Գլիերի, Բերենսի, Դամմի, Դոնիցետտիի և այլ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Համերգի երրորդ բաժինը կազմված էր միայն արիաներից:

---

[5] ԳԱԹ, Միքայել Միրզայանի ֆոնդ, թիվ 86:

1922թ. դեկտեմբերի 22-ին պետական թատրոնում տեղի է ունեցել ստուդիայի առաջին տարեդարձին նվիրված բաց համերգը: Այնուհետև փակ համերգներից բացի դասատուների ուժերով կազմակերպվում էին նաև բաց համերգներ՝ տարբեր ծրագրերով:

1923թ. հուլիսի 3-ին Ռոմանոս Մելիքյանն իր նամակում գրեց.

«Հարգելի ընկ. Աշոտ

Սիրելի բարեկամ

Քսանհինգ ամիս առաջ Ձեր հրավերին արձագանքելով Արուս Գրիգորևնան և ես եկանք Հայաստան հիմք դնելու մեր երկրի երաժշտական կուլտուրայի գործին: Ոգևորված մեր արվեստի վերածնման հեռանկարով և խրախուսված Ձեր բարեկամական վերաբերմունքից քսանհինգ ամիս շարունակ, առանց հանգստի աշխատել ենք մեր փոքրիկ Ստուդիան դարձնել մեծ հավատի հանգրվանը:

Այսօր մենք լիացած ենք բարոյապես, որ ստուդիան իր բովանդակությամբ նախապատրաստված է կոնսերվատորիա անվանելու:

Այսօր մենք լիացած ենք բարոյապես, որ մեր մասսայից դուրս եկած մեր պատրաստած անձնվեր երաժիշտ ուսանողները բուռն ոգևորությամբ խմբերով դիմում են շրջանները՝ Զանգեզուրից մինչև Լոռի աշխատանքի»[6]:

1923/24 ուսումնական տարվա սկզբին (հոկտեմբերի 1-ին՝ Ռ.Մելիքյանի ծննդյան օրը) երաժշտական ստուդիան վերածվեց կոնսերվատորիայի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է Երևանի երաժշտական ստուդիայի պատմությանը, որը բացվեց 1921թ. դեկտեմբերի 22-ին, Ռոմանոս Մելիքյանի ղեկավարությամբ գործեց երկու տարի և 1923թ. հոկտեմբերի 1-ին հիմք դարձավ հայ իրականության մեջ առաջին ու միակ երաժշտական բարձրագույն ուսումնական հաստատության՝ Երևանի պետական կոնսերվատորիայի համար:

Բանալի բառեր – Երևանի երաժշտական ստուդիա, Ռոմանոս Մելիքյան, դաշնամուր, ջութակ, երաժշտական կրթություն:

[6] ԳԱԹ, Արուս Բաբայանի ֆոնդ, թիվ 64:

СТРАНИЦЫ ИСТОРИИ ЕРЕВАНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ СТУДИИ

НАИРА МАДОЯН

Статья посвящена истории Ереванской музыкальной студии, которая открылась 22 декабря 1921 г., действовала 2 года под руководством Романоса Меликяна и 1 октября 1923 г. стала основой для первого и единственного в армянской действительности высшего музыкального учебного заведения – Ереванской государственной консерватории.

Ключевые слова – Ереванская музыкальная студия, Романос Меликян, фортепиано, скрипка, музыкальное образование.

PAGES FROM THE HISTORY OF YEREVAN MUSIC STUDIO

NAIRA MADOYAN

This article is dedicated to the history of Yerevan music studio. Its official opening took place on the 22nd of December of 1921 and the studios' principal for two years was Romanos Melikian. On the first of October in 1923 the studio came to be a base for the foundation of the first and sole higher musical educational establishment, Yerevan Komitas State Conservatory.

Key words **–** Yerevan music studio, Romanos Melikian, piano, violin, music studies, musical education.